ման-փեթէրսոն կը կոչուի. գեղը բոլորովին ի հիւսիս կը շեղի՝ անձուկ ժայռաձորոյն մէջ դէպ հարաւային արեւմուտք ճամբայ բանալու համար։

Խօրմասի քով լոյն ու տակաւ վար իջնող ձոր մը մնանք, որ անթիւ առուներէ խօրմա-սու կամ քեսէք-սու անուանեալ գեղակը կը կազմուի, որ արեւմտեան ուղղութեամբ ի գետն Աշ-ուրը կը գահավիժի։

Ժամը 5ի ու 6ի մէջ արեւելքէ արեւմուտք ձգեալ հրաւերան մը կատարն ելանք, եւ ժամը 7ին գեղը՝ (1405 մեդր) գիշերեցինք։

Խօրմաս-սուի հարաւակողմն կրաւորը ազգագրական միջնորմ մըն է հիւսիսէն տաճիկ, քուրդ եւ հայ ազգութեանց, եւ հարաւէն արաբական ազգաց մէջ. վասն զի ինքնին իսկ գեղաքաղաքի, ինչպէս նաեւ մերձակայ գիւղերն, ինչպէս Սինիֆ (Sinip), Թէ՛ուլ (Tülle) եւ Հէլենէլ (Helensi) եւ Սղերդ քաղաքը բոլորովին արաբական են։ Նոյն իսկ տանց շինուածքին ձեւը կը ցուցընէ որ ազգութիւնք փոխուեցան. անեղն հոս առհասարակ կոփածոյ քարէ բարձրագիր կառուցուած են եւ շատ աչքի կ'ինան, համեմատութեամբ Հայաստանի ցած կամ գետնի մէջ շինուած տանց։

Երկրորդ օրը ժամը 6ին գեղեցաքէն ելլելով՝ Հէլենզի վրայէն գրեթէ ժամն 8ին Սղերդ հասանք։ Ցերուութեան շէնքը մնոնելու ժամանակ՝ դրան քով պահպանութիւն ընող զինուորները հրացանով պարտուպարտաշաճ մեծարանքն ըրին։

(Մնայ՝ ԷՔԼԷՆ ԷՄԷՆ։)

ԳՐԱԿԱՆ

ԸՍԴՈՒՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ 1889 ՏԱՐՈՅ Ա. ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն։)

97. ՇԷՔՍՊԻՐ ՎԻԼԼԻԱՄ — Համլէտ, ողբերգութիւն. թրգմ. Սենեկերիմ Աղբրունի. Հրտ. Բարսեղ Քամանեան։ Տփ. տպ. Ռօտ. 125 էջ.։

[Քէնդրա. Աբեղ. 1889. Թ. 19։ Մը՝ն, 1889. Թ. 42։ Մ՝ուրճ, 1889, Թ. 6։]

98. ՇԲՈՅԷՐ — Առողջաբանական եւ բժշկական մարմնամարզութիւն առանց գործիքի. 45 պատկերով. Հրտ. Վ. Ե. Մարգարեան. Կ. Պ.։

99. ՈՍԿԵԱՆ Ա. Կ. — Նոր Ընթացք զաղղիերէնէ ի հայ թարգմանութեան։ Կ. Պ. տպ. Ե. Դավաթեան։ Մասն Ա.—Բ. էջ 604. 14 ղշ.։

[Քէնդրա. Հ՝ոնթ՝ Ա՛ստրա՛ս, 1890. Թ. 5։]

100. ՀԱՄԵՆԵԱՆ Մ. — Ծոցի օրացոյց 1890 թուի (Գ. Տարի։) Տփ. տպ. Ռօտ. 128 էջ. 15 կ.։

[Քէնդրա. Մ՝ուրճ, 1890. Թ. 1։]

101. ՀՈՒԲԱՐ Գ — Վէպեր եւ Պատկերներ։ Ռոստով (Դոնի վերայ.) տպ. Ե. Տէր-Աբրահամեան. 292 էջ. 1 ր. 5 կ.։

[Քէնդրա. Մ՝ուրճ 1889, Թ. 5։]

102. ՊԱՑԵԱՆ Հ. Գ — Համառօտ Սրբազան Պատմութիւն ի պէտս դպրոցաց։ Վենետ. 1 ֆր.։

103. ՊԱՆՈՒԱԼԶԵԱՆՑ Մ. եւ ԳԷՈՐԳԷԳԵԱՆ — Թուաբանական խնդիրներ. Ժողովածու։ Մասն Ա։ Գ. Տպագր. Տփ. տպ. Մ. Վարդ.։

104. ՊԱՊԵԱՆ-ԴԱՆԻԱԷԼՅԱՆ Մ — Ժողովրդական զրաղարան. "Թամար„ (պատկեր, թրգմ.)։ Հրտ. Բագարատ Միրիմանեան։ Տփ. 5 կ.։

[Քէնդրա. Նոր-Դարբ, 1889. Թ. 213։]

105. ՊԱՐՏԷԶ ՀՈՎՀԱՆՆԷՍ, առօթագիրք։ Կ. Պ. տպ. Ն. Կ. Պէրպէրեան. 2 ղշ.։

106. ՊԱՌՕՅԵԱՆՑ Պ — Յեցեր, վէպ. (արտատպած Մ՝ուրճ ամսագրից։) Տփ. 1 ր.։

[Քէնդրա. Աբեղ. 1889. Թ. 24, 25, 26, 27 եւ 29։ Մը՝ն, 1889. Թ. 68։ Մ՝ուրճ, 1889, Թ. 7։]

107. ՊՕՂՍԵԱՆ Տ. Ե — Դասագիրք թուագիտութեան նոր մէթոտով։ Կ. Պ. 240 էջ. 4 ղշ.։

108. ՊՕՅԱԼԵԱՆ Ա — Բանաւոր եւ գրաւոր թուաբանութիւն մանկավարժական դրութեամբ։ Ա. Տարի։ Կ. Պ. տպ. Պէրպէրեան. 4 ղշ.։

[Քէնդրա. Եր՝ուշ. 1890. Թ. 1837։]

109. ՋԻՒԱՆԻ ԱՇՐՊ — Քեռաթամի եւ Ասլիի հէքիաթը, հանդերձ երգերով. փոխադրութիւն թիւրքերէնից։ Ազգասնդրոպոլ. տպ. Գ. Սանօյեանց։

110. ՍԱՀԱՆԵԱՆՑ Մ — Սրբազան պատմութիւն Նոր Ուխտի։ Տփ. 35 կ.։

[Քէնդրա. Նոր-Դարբ, 1889. Թ. 52։]

111. — — Սրբազան պատմութիւն։ Հտր. Ա. (արեւմտեան թիւրքահայոց բարբառով։) Կ. Պ. տպ. Պէրպէրեան. 4 ղշ.։

[Քէնդրա. Աբեղ. 1889. Թ. 1647։]

112. ՍԱՀԱՆԵԱՆՑ — Քերական որ է այբբենարան։ Տփ. տպ. Մ. Վարդ.։

113. Ս. ԹԱԴԵՈՒԹԻՒՐԴԻ ապահովութեան ընկերութիւն, հրդեհից ապահովելու կարուածները, ապահովելու կեանքն են։ Հրտ. Խոսրովեան։ Տփ. տպ. Մ. Վարդ.։

114. ՍԱՀԱԼԱՆԵԱՆ Տ. Հ. Ա — Գիտութիւն զնատուեոյ. (թրգմ.) Էլմիածին. 5 ղշ.։

115. ՍԱՔԷՐ Տր. — Խոյզիտութիւն (համառօտեալ։) Հրտ. Օրթաքէօյի Ս. Հռիփսիմեանց Վարժարան։ Կ. Պ. 4 ղշ.։

116. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ Պ — Սրբազան Պատմութիւն հին կտակարանի։ Է. Տպագր. Տփ. տպ. Մ. Վարդ.։

117. ՍՈՒՐՀԱՆԴԱՍ, լաւագիր ազգային։ Նիւ-Յորք. տպ. Հ. Էլինեան։

118. ՍՈՒԼԵՅՄԱՆԵԱՆՑ քօշիշ պատմութիւն։ Կ. Պ. տպ. Թօլայեան. 28 էջ։

119. ՍՏԵՓԱՆՆ Խ. Վ — Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց։ Ս. Պետր. տպ. Սկրոբոյեոգով։ ՃԾԳ. 351 էջ. ծանօթ. եւ Ցանկ։ Ուսեալ 328 էջ. 1 ր. 5 կ.։

[Քէնդրա. Աբեղ. Բ. Տարի. Գիրք Բ. էջ 113։ Ազբ՝ուր, 1890. Թ. 1. Բ՝ուին Բ.։ Հ՝ոնթ՝ Ա՛ստրա՛ս, 1890. Թ. 5։ Մ՝ուրճ, 1890. Թ. 1։ Նոր-Դարբ, 1890. Թ. 10, 11, 12, 13, 14։ Աբեղ՝ էջ, 1890. Թ. 1933—5։]

120. ՍՏԵՓՈՅԵԱՆ Թ — Սոկրատէս (թրգմ.։) Տփ. հրտ. "Գրքերի հրատարակութեան Ընկեր„. 10 կ.։

121. ՎԱՐԴԱՆԵԱՆ Փ — Արեւելեան վիպաշխարհ. (թրգմ.) Տփ. տպ. Մարտիրոսեանց. 20 կ.։

[Քէնդրա. Նոր-Դարբ, 1890. Թ. 3։]

122. — — Ռուսատէմ եւ Զոհրապ (Փիրդուսի Շահնամէից) (թրգմ. գեղմանեաներէնից.) Տփ. տպ. Ե. Մարտ.։

[Քէնդրա. Մ՝ուրճ, 1890, Թ. 2։]

123. ՎԷՐՆԻ ԺՈՒԼ — Սեւ Հնդկաստան. թրգմ. Լեւոն Բաշալեան։ Կ. Պ. տպ. Աբեղ՝ էջ. Հ. 3։

124. ՏԱՄԳԱՆԵԱՆՑ Վ. Ա — Դասագիրք թուաբանութեան։ Ա. Տարի։ Կ. Պ. 3½ ղշ.։

125. ՏԱՏԻՇԵՎԻՆ Գ — Տնտր հայկական նշանագիրների, հարթանկար տառեր։ Վիմագրութիւն. Տփ. 75 կ.։

126. ՏԱՐԵՐՔ մայրենի լեզուի։ Հրտ. Բարսեղ Ղազէրեանց։ Բ. Տպագր. Կ. Պ.։

127. ՏԷՄԻՐՃԻՊԱՆԵԱՆՑ Ե — Դարձ, հաւաքածոյ ազգային զրական ու զիտական տառուածոց։ Կ. Պ. տպ. Պալոյ. 1 տետր։

128. ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑ Ե — Բառարան հայերէնից ռուսերէն (54 թեղթ։) Ռոստով (Դոնի վերայ։) տպ. Սեպհական տպարանում։

129. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆՑ Ե — Տեղագրական Նամականի։ Տփ. 80 էջ. 30 կ.։

[Քէնդրա. Մ՝ուրճ. 1889. Թ. 12։]

130. ՏԷՐ-ԳԻՒԳՈՐԵԱՆՑ Գ — Մանուկների մար-

digitised by A.R.A.R.@

սողութեան գործարանների մի քանի հիւանդութիւններ. Տփ. 5 կ.:

131. ՏԷՐ-ՂԵՌՈՒԹԵԱՆ Ն — Մայրենի լեզու: Ա. Տարի: ԺԴ. տպագր. Տփ. տպ. Մ. Վարդ.:

— — Նոյն, Բ. Տարի: Դ. Տպագր. Տփ. տպ. Մ. Վարդ.:

132. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ — Հայ ազգի կատաղի թշնամին. (արտատպած "Ազգապաշ„ թերթից:) Տփ. տպ. Մ. Վարդ.:

133. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ Մ. — Ռուշան եւ Հիւրիզաղ, վէպ (Ղարսաբաղի անցեալից:) Տփ. 40 կ.:
[Գնդեր. Մոսք. 1889, թ. 9:]

134. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ Ս. — Սկզբունք Քրիստոնէական Հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ: Դ. Տպագր. (քարեփոխած.) Հրտ. Կեղր. Դրաված. Տփ. տպ. Մ. Վարդ.:

135. ՏԻՖՕ — Դալի աղաղներան, պատերներ. Ճպատցա քօլատ կտրի: Տփ. տպ. 6. Մարթ. 43 էջ. 1 ր.:

136. ՏԻՄՄԱ Ա — Փէլանան. թրգմ. Տիգրան Արփիարեան. Կ. Պ. տպ. Աբէ-Էտփ. 635 էջ. 10 ղ.:

137. ՐԱՓՓԻ — Բիբի-Շարաբանի, պատկեր. (թրգմ. ի ռուսերէն) թրգմ. Բ. Վերմիշեան: Տփ. տպ. Մ. Վարդ. 16 էջ. 15 կ.:

138. ՓԻՆՆԻՆՑ Թ — Մելիք, պատկերներ հայ գիւղական կեանքից: Տփ. տպ. Վարդ. 25 կ.:

139. ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Պատմութիւն Հայոց: Բ. Տպագր. Վենետիկ. տպ. Մխիթ. էջ ԺԱ եւ 289:

140. ՓԱՓԱՋԵԱՆՑ Մ — Հնութիւնք Հայրենեաց. ալբօմ (ուսանկար բացատրութիւններով:) 10 ր.:

141. ՓԱՇԵՑԵԱՆ Ե. Ե — Համաձայնութիւն տասներկրէն լեզուի: Կ. Պ. տպ. Պաղտատեան:

142. ՓԻԼՈՑԵԱՆ Ս — Զրոյցներ բնական պատմութեան: Մասն Բ. Տփ. տպ. Ռօտ. 60 կ.:

143. ՓՈՒՆՋ, Շաբաթաթերթ: Լ. Տարի: Կ. Պ. Տնօրէն-Տէր. Հ. Ս. Ալամեան. 2։ մէջտեղ:

144. ՕՐԱՑՈՑԵ պատկերազարդ մնծադիր: Տփ. 30 կ.:

145. — — ՆՈՑՆԸ փոքրադիր (յաւելուածով եւ երգագանով:) Տփ. 15 կ.:

146. ՕՐԱՑՈՑԵ 1890 թուի. տպ. Վաղարշապատ. 20 կ.:

147. ՕՐԱՑՈՑԵ ՊԱՐԶ 1890 թուի Քրիստոսի. սեպհականութիւնն Ս. Փրկչի հիւանդանոցի: Կ. Պ. տպ. Գ. Պաղտ. 40 փարա:

148. ՕՐԱՑՈՑԵ ԸՆԴԱՐՁԱԿ 1890 թուի: Կ. Պ: տպ. Պաղտատեան. 356 էջ. 75 սանթիմ:

149. ՕՐԱՑՈՑԵ 1890 տարւոյ: Վենետիկ. 100 էջ:

150. ՓՈՒՌՆԻՆ ԵՒ ՄՂԵՑԻՆ — Սեւ ղղեկի աւերումները, պատմական թատերգութիւն. թրգմ. Տ. Գալէմեան: Հրտ. Տիրան Փափազեան: Կ. Պ. տպ. Մ. Կ. Սարեան. 7 ղ.:

(Շարունակելի.)

Հայերէն գրոց այս ցուցակը կազմուած է այն գրքերէն՝ զոր կրցանք հաւաքել ազգային թերթերէն: Դժբախտաբար կատարեալ եւ լիուլի ցուցակ մը յօրինել գրեթէ անհնար է: Հայ թերթերէն եւ ոչ մին սովորութիւն ունի նոր հրատարակութիւնները կանոնաւորապէս հրատարակել, այլ այն գրքերը միայն՝ որոնք խմբագրութեան կը հասնին: Բայց նաեւ այս շատ անգամ շատ համառօտ, առանց յիշատակութեան տարւոյ, մեծութեան, էջերու, տպագրութեան տեղւոյն եւ գնոյն: Ցանցառ չեն նաեւ այսպիսի հրատարակութիւնք. "շուտով լոյս կը տեսնէ.„ "մամլոյ տակէ„ եւն, եւ սակայն ալ եւս չի յիշուիր թէ երբ կամ ուր լոյս տեսաւ: Այս պարագայից մէջ ի հարկէ մեր այս ցուցակին անթերի չի կրնար ըլլալ, եւ կրնանք ըսել թէ գուցէ 1889 տարւոյ մէջ հրատարակուած գրոց մէկ մեծ մասն հոս յիշուած պիտի չըլլան:

Արդէն յառաջագոյն խնդրած էինք հայ տպարանապետներէ որ հաճին իրենց տպագրած գրոց ցուցակն ուղարկել խմբագրութեանս. սակայն այս կամ այն պատճառաւ կարելի չեղաւ հատ մը ձեռք բերել: Այս օրերս մեր ձեռքն հասաւ Տփղիսի Մ. Վարդանեան տպարանի 1889 տարւոյ մէջ տպուած հայերէն գրոց ցուցակը, որ 32 կոտոր կը բովանդակէ: Ամենքն 20 հատ 1889ի հրատարակութիւնք են, սակայն հաղիւ 15 հատը գտած ենք ազգային թերթերուն մէջ յիշուած: Հոս կը գտնենք այն գրքերը որ մեր ցուցակին մէջ կը պակսին, թէեւ ասոնցմէ ոմանք 1890ին լրացած են:

131. ԱՂԱՑԵԱՆՑ Դ — Ուսումն մայրենի լեզուի. Այբբենարան. Ա. Գիրք. Ը. Տպագր. Հրտ. Կեղր. Դրաված. Տփ. տպ. Մ. Վարդ.:

132. — Արութիւն եւ Մանուէլ: Բ. Տպագր. (լրացած.) Բ. Գիրք. Տփ. Մ. Վարդ.

133. — Ուսումն մայրենի լեզուի: Գ. Գիրք. Հրտ. Կեղր. Դրաված. Տփ. տպ. Մ. Վարդ.:

134. ԱՂԱՄԵԱՆՑ Գ — Կրօնի դասագիրք. Բ. Տարւոյ. Գ. Տպագր. Հրտ. Կեղր. Դրաված. Տփ. տպ. Մ. Վարդ.:

135. — Աղօթատետր հայոց եկեղ. ծիսական եւ արքունի ուսումնարանների համար. Բ. Տպագր. (լրացած:) Տփ. տպ. Մ. Վարդ.:

136. ԲԱԼԴԻԱՍԱՐԵԱՆՑ — Ողբ Ստեփանոս Կորնթելեանցի յիշատակին: Տփ. տպ. Մ. Վարդ.:

137. ՋԱԼԻՆԵԱՆՑ — Անգաստ Մայրը, պատմական վէպ. (թրգմ.) Տփ. տպ. Մ. Վարդ.:

138. ՀԱՅՈՐԻՑ — Սրբազան Պատմութիւն հին Կտակարանի: Բ. Տպագր. Հրտ. Կեղր. Դրաված.: Տփ. տպ. Մ. Վարդ.:

139. ՄԱՆՈՒՆԵԱՆ Ս — Հնչեալի քանաւոր եւ գրաւոր հաշուելու խնդիրներ. (փոխադրութիւն:) Ա. եւ Բ. Տարի: Դ. Տպագր. Տփ. տպ. Մ. Վարդ.:

160. ՆԻՔՏԼԻՆԳԵՐԻ հրատ. — Ընկերութիւն "Զինգերի„ Նիւ-Եորքում ձեռնարկ կարի մեքենանների: Տփ. տպ. Մ. Վարդ.:

Այս առթիւ հրապարակաւ կը խնդրենք հայ հեղինակներէն, տպարանատէրներէն եւ գրավաճառներէն, որ բարեհաճին իրենց հրատարակութեանց գոնեայ վերնագիրն (հանդերձ մանրամասն տեղեկութեամբ՝ տարւոյ, էջերու, գնոյն, եւն) ուղղել խմբագրութեան յաջորդաբար մեր գործակալներու ձեռքը. մանաւանդ՝ որ կը բաղձանք ոչ թէ տարին անգամ մը հաւաքեալ գնել հայ հրատարակութեանց ցուցակն, ինչպէս ցայսօր կ'ընէինք, այլ իւրաքանչիւր վեցամսեայ ժամանակի մէջ լոյս տեսած գրքերը, նաեւ թերթերու մէջ հրատարակուած թէ նիւթովն թէ բովանդակութեամբը մտադրութեան արժանի ազգային յօդուածներն (առաւել այնպիսիք որ Հայոց հին ու նոր պատմութեան, մատենագրութեան, ազգագրութեան, տեղագրութեան եւն եւն մասին կը խօսին,[1]) ամիսի հրատարակել:

[1] Մոռացիր ըլլալով նաեւ իւրաքանչիւր հրատարակութեանց մասին ազգային թերթերու մէջ լոյս տեսած բաւական ընդարձակ յօդուածները: Իսկ ազգային թերթերու մասին հրատարակուած յանձնարարութիւններն ու քանակութիւնները չեն նշանակուիր:

digitised by A.R.A.R.@

Ա.յսպիսի մանրամասն ցուցակի մը կարեւորութիւն եւ ուսումնական ու նիւթական օգուտը կարծենք պէտք չկայ ցուցընելու հեղինակներուն, տպարանատէրերու եւ գրավաճառներու։

ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

ԶՄԻՒՆԻՈՒ ԵՒ ՈՂՋՈՒՆՔ

(Հրատարակութիւն Ի. Փրկ.)

Վասնզի որ երկիրն ամէնէն աւելի հոգագործութեան յատուկ է, բնական հարկ մի էր որ յառաջադիմութեան հետամուտ տարբ մը նոյն ճիգով եւս զբաղէր. բայց ինչ ինչ տեղական պայմաններ արգելք եղած են ասոր, եւ Հայք իրաւամբ ընտրած են աւելի ապահով ասպարէզ մը՝ վաճառականութիւնը, թէեւ ամէն ժամանակ իրենց մէջ անպակաս եղած են քանի մի հողուտէրեր, որոնք ընդարձակ արտերու, պարտէզներու եւ ագարակներու տէր եղած են, եւ են շրջակայքը։ Ոչ այնչափ շահու տենչէն, որչափ բնութեան սէրը գրգռած է գիրենք հետեւիլ այս ասպարէզին, վասն զի յետին մանրավաճառն իսկ իւր ամէն ինայողութեանց մէջ նպատակ ունի տեր ըլլալ քաղաքին մէջ անշարժ կալուածոյ մը, ինչպէս է տուն, կրպակ եւ այլն, եւ անոր վարձքը թէեւ սակաւաբեր, այլ համեմատաբար ապահովագոյն շահ նկատելով՝ բաւականանալ։

Ա.յսպէս ոչ միայն քաղաքին կարեւորագոյն կալուածներն հայ հարուստներուն կը պատկանին մեծաւ մասամբ, այլ եւ համեմատաբար հայ հասարակութիւնն է առաջնակարգ կալուածատէր. եւ եթէ անշարժ կալուածներն յատուկ տուրքերու չենթարկուէին եւ վերջին 15—20 տարուոյ կալուածատէրց՝ վարձակալներու վրայ ունեցած իրաւունց օրինական սեղմումները չլինէին, որոնք բարեբախտաբար վերջերս բաւական բարեփոխուեցան, անտարակոյս Հայք շատ աւելի կալուածներ գնած պիտի ըլլային այսօր։

Իսկ արուեստներուն ընդհանրապէս շատ սիրահար չեն Հայք. թէեւ ստուար թուով արուեստաւորներ կը գտնուին, բայց նախնական արուեստներու մէջ միայն, ինչպէս են ոսկերչութիւն, դարբնութիւն, վերմակագործութիւն, սափրչութիւն, կօշկարարութիւն եւ այլն. արուեստներ՝ որոնք թ վաղուց ապրուստի ապահով միջոցներ նկատուած են, ուստի հայրը պատուն, եւ որդին հօրն յաջորդելով զանոնք կը շարունակեն մեծաւ մասամբ։

Ոչ արուեստներու մէջ կատարուած բարեփոխութեանց, եւ ոչ ալ իւր արուեստանոցն ընդարձակելու հետամուտ է հայ արուեստաւորը. վասն զի գրեթէ ամէնքն որ արուեստի մը շնորհիւ գրամի տէր եղած են, նոյն զբաղումը թողուլով՝ ուրիշ ասպարիզի հետամուտ կ'ըլլան, եւ հետեւաբար արուեստները կը մնան նիւթապէս յետամնացեալ ձեւերն, որոնց համար բնականապէս հեշտ չէ յառաջադիմել։

Քանի որ արուեստներու վրայ կը խօսինք՝ յիշենք նաեւ գործարան մը, որ Պասմաճեան անունը կը կրէր, եւ ուր կը տպուէին ծաղկեկնար վարշամակներ՝ տեղւոյս ներքին կողմերու բնակչաց գործածութեան համար։ Նախորդ դարէն մնացած հաստատութիւն մի էր սա, որու առանձին բաժիններուն մէջ քանի մի գործատէրեր հայ բանուորին գոհացուցիչ աշխատութիւն մը կը մատակարարէին։ Ա.յս գործարանն ի վերջոյ Իզմիր-Գուտապա երկաթուղւոյ գծին կայարան եղաւ. նախկին մենաշնորհը, որ անկէ դուրս միւնոյն արուեստը չբանիլ էր, ընկուեցաւ. քաղաքին այլեւայլ կողմերը՝ թէեւ նուազ ընդարձակ, այլ միւնոյն նպատակին համար քանի մը գործարան հաստատուեցաւ, եւ հայ գործարանատերք աւելի ընդարձակելով իրենց արուեստը, ոչ միայն հայ՝ այլ եւ յոյն ուստիկ բանուորներ սկսան աշխատցընել։

Միայն վաճառականութեան եւ արուեստներու մէջ չէ որ Հայք իրենց բնատուր ձիրքերն ի յայտ կը բերեն, այլ եւ տեղուոյ թեան պաշտօններու, բժշկութեան, փաստաբանութեան մէջ եւս։

Բարձրագոյն եւ երկրորդական պաշտօնեայք ամէնն ալ հաստատմութեամբ եւ յաջողութեամբ կը ծառայեն տեղուոյ թեան։

Հայ բժիշկք բազմաթիւ չեն, հինգ միայն. մինչ քաղաքին ամբողջ բժշկայ թիւն իբր ութսուն է, սակայն հինգ առ ութսուն կարեւոր թիւ մի է՝ համեմատութեամբ Հայոց եւ քաղաքին ամբողջ բնակչաց թուոյն. մանաւանդ՝ երբ նկատենք սա պարագայն եւս, որ բժշկայ մեծագոյն մասն յոյն է, որովհետեւ Յոյնք մեծ դիւրութիւն ունին բժշկութեան արուեստն ուսանելու. յԱթենս, մինչ Հայք սոփրատած են՝ Եւրոպայ ուրիշ մասերու մէջ՝ աւելի հեռուն երթալ, եւ թէեւ լաւագոյն, այլ եւ աւելի սուղ ուսանիլ։

Առաջին տայ վկայեալ բժիշկը, որ կը յիշուի անցեալոյն մէջ, եղած է բժիշկ Թոքսվիշ Թուսահայը՝ որ ժամանակ մը մնացած է քաղաքս. իսկ առաջին Հայը, որ քաղաքէս Եւրոպա ուղեւորած է նոյն արուեստն ուսանելու՝ եղած է բժիշկ Թաքսոր Վարդանեան, որ քառորդ դարէ աւելի ամէն տեղացի Հայու գործոնն մատուցած է։

Փաստաբանութիւնը նորագոյն ասպարէզ է ամբողջ երկրին համար։ Ժամանակ մը ատենագիր գրագիրներ միայն կային, որոնք թնդրագիր, աղերսագիր եւ այլ պաշտօնական թղթեր կը գրէին, իրենց գիմողներուն՝ օրինաց մասին բացատրութիւններ ու խորհուրդներ կու տային։ Ասոնց մէջէն Հայերն մանաւորաբար՝ օտար լեզուներու եւս հմուտ գրանուելով՝ ի հարկին հիւպատոսարաններու տարեալ գրութեանց թարգմանութիւններով եւս կը զբաղէին, եւ ասով ի վարուց հաստատուած արդարադատներու արուեստին վրայ նոր ճիւղ մը կազմելլրնէին։ Բայց երբ գաւառական նորոգ տեսանոներ կը կազմուին եւ գաւառվարութեան օրէնքն ու կանոնն հինգապէս կը բարեփոխուին, այն ատեն փաստաբանութիւնն անհրաժեշտ հարկ մը կը դառնայ եւ բազմաթիւ փաստաբաններ ասպարէզ կու գան, որոնց մէջ նաեւ Հայերն առաջին օրէն առաջնակարգ տեղ մը կը գրաւեն։ Հազիւ տասնու հինգ տարուոյ

digitised by A.R.A.R.@